

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍՈՒՆՆԵՐ
2 քիւ մեկ ծրարով)
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

— 0 —

Մանուցման տղը
20 սանթիմ

ՀԱՍՑԵ

Rédaction du journa

„Iravounk“

V A L N A (Bulgaria)

— 0 —

Редакция


на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

— 0 —

Դրոպիւնիս ևս
չեն տրուիր



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՍՈՒՆԻ ԲԱՅՑ ԻՍՏԱՍՈՒՆ ԿՈՒԻ

Կարգաւով մեր անցեալ չորեք շաբթի օրուան «Երկուք մէկ» վերնագրի տակ ստորագրած յօդուածը, բարեկամներէս ոմանք սալով միամիտ բացադանչութիւնը նետեցին ճակտիս, բարեմտութեան անկեղծ թունով մը:

«Ա՛, Դէս ու Դէն, դուն ալ հակասեր ես: Դեռ երեկ, դուն էիր որ շաբթի մը յօդուածներու մէջ, ամենէն ծանր ու նախատական խօսքերը կուղղէիր Եւրոպական դիւանագիտութեան հասցէին և այսօր երկր կը փայփայես զայն մէկէ աւելի հաճոյակատար ֆրանսիացիով:» (*)

Չէ՛, բարեկամներս. հակասութիւն չկայ. Հոն, այդ անարկուած յօդուածներուն մէջ ալ մի. ածամակ երկու ուժին՝ յեղափոխութեան և դիւանագիտութեան կարեւորութիւնը չէլտած և զանոնք երկու թեւեր անուանած եմ, մեր բարձրացումին համար անհրաժեշտօրէն հարկաւոր:

Իրաւ է թէ մեր եզական մարտիրոսութեան հանդէպ, դիւանագիտութեան մինչեւ հիմա բռնած եղանական ընթացքը քննադատած և կսկծանքի դառնագին փըրփուրներ թափած եմ, բայց երբեք յանձնարարած չեմ կռնակ դարձնել իրեն. ընդհակառակը աւոր դատապարտելի քունը խանգարել և զանի ուշ կամ կանուխ՝ հայկականին պէս արդար ու ազնիւ դատի մը պաշտպանութեան ստանձնումին հարկադրել պնդած եմ, գոնէ հանրային կարծիքը ըստ ան լոյստին տակ, բռնօրէն: (*)

(*) Այս անհարկութիւնը կը վերաբերի «Բարիկէի Հայերուն» վերնագրով գրած յօդուածներուն, ուր ի միջի այլոց ըսած էի՝ «միջազգային դիւանագիտութեան պոռնկութիւնը վճռող անուրի կոտորածներէն յետոյ» եւն:

(*) Բարեկամներս արդեօք չկարողացին միեւնոյն յօդուածին մէջ և ուստի խօսքերը «Եւրոպայի հանրային կարծիքը» օր մը չէ օր մը՝ դիւանագիտական վերածուած, բռնի մաքրագործումով պիտի սրբացնէր դիւանագիտական պոռնկութիւնը» եւսայն:

Մ. Թ.

Անոր մեռելական անտարբերութիւնը՝ որ հետզհետէ կարմիր գազանին մեղսակից ըլլալու. անուրի համեմատութեանը կը հասնէր, քննադատելու է՛ն զօրեղ թափին մէջ անգամ, հակամարտութիւն, մեղք չկայ. մեղքը՝ անոր պէտքին ուրացմանը մէջն է, ինչ որ ըլլին մեր յեղափոխականներէ ոմանք, յայտնի համարձակ:

Եւ ուրացումի այս տարամբժ քաղաքականութեան հակառակ, այսօր հարկադրուեցան ափ առնել անոր դուռը, վիզ տալով պատշաճօրէն: Ահա բուն հակասութիւնը, զոր սակայն շնորհաւորելի գտած եմ սկզբունքով, իբրեւ յայտնի լուսացայտք մը իրենց ըմբռնումներու թոհոյութիւն մէջ:

Տասնեակ տարիներէ ի վեր ան. դուր անդադրում գործուած յեղափոխական սխալները քննադատել, անոր պէտքը ուրանալ չնշանակեր, ինչ որ պէ՛տք մը վերագրել ուղեցին այդ քննադատներուն՝ տի. միւս ևս ոչ ոքի մը յարմար չէր: Եւ իրաւ թողութեան աշակերտող մէկ քանի ցնդած վիժակներ, նոյնպէս և դիւանագիտութեան վեց տարիէ ի վեր բռնած ընթացքը դատաւիտել, ազգերու ազատագրութեան գործին մէջ, անոր ունեցած կընքաօրական անժխտելի իրաւունքը ուրանալ չենթադրեր:

Երկուքն ալ պէտք են: Պէ՛տք են ու պաշտելի. երբ մասնաւոր յեղափոխութիւնը իր տարրին մէջ գտնուի շնորհիւ արթնութեան ու պարկեշտ վարիչներու և դիւանագիտութիւնն ալ հաճի անգամ մը աչք նետել հայ երկրին աւերակներուն վրայ յեղափոխութեան կարմիր ցօլքերուն տակ:

Բայց խնդիրը հող չէ՛ հիմակ. խնդիրը՝ վարկեանին հանդիսաւորութիւնն է, ուր ինչպէս կերելու, դիւանագիտութիւնը զարթնումի՝ իր սուղին յօրանջումներով վերադարձել կը ձգտի բոլոր հայութիւնը:

Աստուած չընէ, գոցէ կրկնութիւնը պատրիշ է և մենք ձեռք առնելու դատապարտուինք նորէն ա-

նէժքի տոպրակը. . . . Մենէ ոչ ոք կրնայ գուշակել առիկա:

Մեր պարտքն է միայն հարկադրաւոր դիւանագիտութեան վրայ աւանդաբեկութիւնը խուցացող այդ դիւանագիտութեան ամեն մէկ երեւորակումէն օգտուիլ ու զանի արթնցնելու գերմարդկային ճիգը թափել միարան:

Վստահ ըլլանք, որ անիկա մեր անէծքներուն, մեր հայհոյանքներուն համար քէն պահած չէ մեզի դէմ: Պառաւի տրամաբանութիւնն է, որ այսպիսի վախկոտ եւ թաղարկութիւններու զոհել կը քարոզէ վշտի է՛ն սրբազան ու է՛ն անդիմադրելի պոռթկումը բնորոշ ճիգը չը պատահասող միակ կարող ուժին:

Երէկ իր բունին մէջ գտանք աւոր պոռնկութիւնը ու կուշտ կուշտ հայհոյանք, որովհետեւ անէժքէ, հայհոյանքէ զատ ուրիշ զէնք չունէինք իրեն դէմ: Այսօր իր արթնութեան մէջ կը նշմարենք մեր բարօրութեան հեռապատկերը ու ափ կառնենք իր դուռը:

Մի վախճա՛ք, չենք վախճալի, եթէ իր հաշիւները դուր են մեր պահանջին հետ. որովհետեւ անիկա զգացումի հետ գործ չունի. հաշիւն է, չահն է, որ կառաջ նորդէ զինքը:

Այո՛, երեք հարիւր հազար նա հատակներու արեան լողանքը չըսթափեցնէր զինքը, բայց կրնայ պատահել, որ երեք հազար հառաչանքը բաւէ իր ամբողջ էութիւնը սարսիլու, եթէ հասած է այն զերբը, յանկ ժամանակը՝ ուր իր էնթրիքներ հերիք համարեն արդէն մեր գարեւոր տառապանքը:

Եւ վստահ ըլլանք, որ օր մը չէ օր մը, պիտի գտնենք այդ երջանիկ ժամանակը. վստահի մենք բարեբաղդաբար սուսիկ մուրացիկ ներէն չենք, որոց ձայնը իրենց գլխէն վեր չընենք. ի հարկին կը պառնաք ալ, Եւ դիւանագիտութիւնը երկաճաքարի մը չափ դարձաւ ձգտելու չէ տեղ մը անշարժօրէն: Մենք՝ կը կրկնեմ, ապահովապէս պիտի գտնենք այդ պաշտելի

ժամանակը յեղափոխութեան ցայտած լուսովը, հերիք է որ այս վերջինը չըլլայ շրջադիպ հուրի մը պէս պատրական ու վաղանց. եթէ այսպէս ըլլայ իսկ, ուզէ չուզէ, պիտի շտկուի անիկա՝ ժողովուրդին գործնական ապտակին տակ, ինքզինքը դնելով վերջապէս իմաստութեան ու շրջադիպութեան ճանքուն մէջ, ուրկէ միայն քաշելով է, որ պիտի գտնենք մեր ըզձանքներուն լրումը:

Անիմաստ, ապուշ և երեւոյթէն դատելով, յաւիտենապէս անուղղայ ուրացումներէ յետոյ, այսօր դիւանագիտութեան կարեւորութեան ու պէտքին ըմբռնումը մեր յեղափոխականներէ, էն սփոփաւոր երեւոյթն է, զոր կրնայինք արձանագրել վերջին վեց տարուան յեղափոխական պատմութեանը մէջ:

Ուրեմն որչափ ալ յուսահատներ պառաւի լոցը լան, որչափ ալ անաւան խաչագողներ յեղափոխական սուրբ գործը վարկաբեկելու նկրտին և անդին քանի մը եսախտաւորներ ալ՝ յանուն ազգային իրաւանց՝ զիրար բզկտելու արջնուռ. քիչնր ունենան գերազանցապէս քաղաքակիրթ և անուսուցողական երկրի մը վրայ, մենք՝ առնաք նը կատելու հնք իբր ամեն ազգի պատմական կեանքի մէջ տեսնուած տխուր երեւոյթներու մէկ բնական վիճակը և մեր սուրբ պարտքը կատարելու ենք անխափան:

Պարտք մը՝ որ սակայն հաշտ ընթանայ դիւանագիտական հայրենացներուն հետ:

Կռի՛ւ. Բայց իմաստուն կռիւ. Դէս ու Դէն

ԿԱՐԵՆՈՐ ԱԶԴ

Ցարդ բաժնեգին չի վճարող մեր բաժանորդաց իւրաքանչիւրին մէկ մէկ երկտող զրկելով, իմացուցինք միւս չեւ այս սարույ դեկտեմբերի վերջը իրենց պարտքին քանակը, խնդրելով որ ընդ փոյթ վճարեն: Հակառակ պարագային պիտի ստիպուինք մեր դեկտեմբեր համամատ վարուիլ:



ԾՐԱԳԻՐ ԲԱՐԵՆՈՐՈԳՐԱՆՑ
ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ

(Արդի էրգրում, Պիքիս, Վան, Սիվակ
Մանուկքիսի Ագիգ, և Տիարպիսի
Վիշապիսիսը:)

ՓԼԱՌԱԾ Ժ.

ՀԱՄԻՏԻՅԷ ՀԵՄԵԼԱԶՈՐԷԸ

Գորդում 25

Ձինավարժութեան համար օրէնքին
որոշած ժամանակներէն դուրս, եթէ
պէտք տեսնուի Համիտիէ հեծեալ
գունդերուն ծառայութեանը, ստոր-
միայն կանոնադրութեանը կը գործա-
դուցնուին հետ միասին կը գործա-
ծուին և կը բանակին անոնց մէջ,
որոնց մէկ երրորդ մասէն աւելի ըլ-
լալու չեն:

Սովորական ժամանակ ևս զինուո-
րական ծառայութենէ դուրս, Համիտի
յէ հեծեալները ոչ համազգեստ և ոչ
զէնք կրելու իրաւունք ունին: Նոյն
պարագայից մէջ, անոնց դասերը սո-
վորական դաստիարակութեան մէջ
պիտի տեսնուին, ինչպէս որ արդէն նախա-
գծուած է Համիտիներու կանոնա-
գրութեան մէջ, համաձայն Րէտիֆիկա-
ցիոն համար գործադրուող հրահանգնե-
րուն: (Սամ. զինուոր. օրէնք յօդ. 4)

ՓԼԱՌԱԾ ԺԱ.

ՍԵՊԼԱԿԱՆՈՒԹԵԱՆԸ ԽՆԴԻՐՆԵՐ

Գորդում 26

Մէկ նախագահ և չորս անդամներէ
բաղկացեալ, որոնց երկուքը մահմե-
տական և երկուքը քրիստոնէական,
մասնաւոր Յանձնարարութիւնի պաշտօն
պիտի ունենան վերաբերելու սեպակա-
նութեան թուիթերը և իրաւունքնե-
րը և ուղղելու այն անկանոնութիւն
ները որոնք կ'ապացուցուին: Մաս-
նաւոր Յանձնարարութիւնը մըն ալ՝ ապա-
գային սեպակահանութեանց իրաւունք-
ները կատարեալ ապահովութեան տակ
գնելու համար, անոնց կարգադրութեան
եղանակը պիտի գտնէ:

ՓԼԱՌԱԾ ԺԲ.

ՏԱՍԱՆՈՐԴԱՑ ՀԱՄԱԲՈՒՄԸ

Գորդում 27

Բոլոր տուրքերը, որոնց մէջ նաեւ
տասնորորդը (էօշիւր), պիտի հաւա-
քուին ուղղակի միւտիթին իրաւասու-
թեան տակ, գիւղականներու ժողով
ներէն բնաւորած հաւաքիչներու մի-
ջոցաւ:

Գիւղականները բոլոր բնակիչք համե-
րաշխարհար պատասխանատու են ի-
րենց համար որոշուած տուրքերուն
ամբողջովին վճարմանը:

Գորդում 28.

Տասնորորդական տուրք վարձակալու
թիւնը (իւթիդամ) և տարապարհակ
աշխատութիւնը (անկարիտ) ջնջուած
են:

Մէկ մի վարչական կեդրոն, գիւղա-
խմբէն սկսեալ, հաւաքուելիք տուրքե-
րուն վրայ պիտի աւելցնէ իր վարչու-
թեան ծախքերուն պէտք եղած գումար-
ը, որոշուած և կառավարութենէն
վաւերացուած պիտի ըլլի մը համեմատ:
Նոյնպէս վիճայթիւն ելեւմտական
վարչութիւնը նահանգին ամբողջ տուրք
քերուն վրայ պիտի աւելցնէ վիճայթե-
թի վարչութեան պէտք եղած ծախ-
քերը, որոնց մէջ են հանրային շի-

նութեանց և հանրային կրթութեան
ծախքերը:

Հասարակութիւնը, ոչ մէկ պարա-
գայի մէջ, պարտաւոր չէ ոչ զօրքե-
րուն, ոչ պաշտօնեաներուն գործու-
նէութեանց համար հարկ եղած տեղը
և պաշարը հայթայթելու:

Տուրքերու չի վճարուելուն պատճա-
ռաւ բոնի վաճառում ըլլալու պարա-
գային, խիստ ուշադրութեան պիտի
ըլլուի որ ժողովուրդը չի զրկուի ա-
ռաջնակարգ կարեւորութեան ունեցող
տնտեսականութիւն և իր աշխատութեան
գործիքներէն:

(Շարունակելի)

ՆՈՐ ՈՒՂԻՆ

Ա.

Ձէյթունի նախկին ապստամբապետ
ներէն մին, Պ. Աղասի «Թողովուր-
դին Համար» ամսականութիւն մէջ հրա-
տարակած մէկ առաջնորդողովը ազ-
գային ազատագրութիւնի պայքարը բոլոր-
ովին նոր ուղիի մը վրայ տեսնել կը
ձգուէր: Բաղդադէն վաղաժամանակե-
րուն արդի ու անցեալ կացութիւնը,
Պ. Աղասի գիտել կուտար թէ հայ դիւ-
ղացիներուն վիճակը այժմ չափազանց
տարբերած է, ու մինչ անոնք մի
սարկիսեր առաջ գիւղացիները կրնա-
յին հայ յեղափոխութեան օժանդակել,
այսօր հայ յեղափոխականն է որ հետը
գիւղացիին պաշար տանիլ հարկադր-
ուած է:

Բարենշան է ու ապագային համար
բեղմնաւոր քաջարի ապստամբապետին
այդ անվերապահ խոստովանութիւնը,
որ դատապարտութիւն իսկ է իր եր-
բեմին գործունէութեան:

Միւս կողմէ Երուսաղէմի նախըն-
թաց թուով Դէս ու Դէն խաղաղապետ
հիացողը ու գնահատողը կը հանդիսա-
նայ յեղ. գիւղացիներու կողմէ նորերս
փորձուած մէկ քանի գիւղականական
ձեռնարկներու, ու կուսակցութեանց
զէպի գիւղականացութեանը գոյացած
այս անակնկալ զիմարջութեան (վոյգ-
ֆաւ) առաջնորդութեանը, Դէս ու Դէն
զեղեցիկ պատահութիւն մը կը գտնէ
յեղափոխական պայքարին ու գիւղա-
նապիտական միջոցներու զուգործաց
գործակցութեանը գերազանց արդիւն-
քին վրայ հիս քոս փոս ճառելու:

Մեր ազգին արդի կացութեանը պա-
հանջներուն յարմարագոյն խորհրդա-
ծութեան խնդիրներ չէինք կրնար գտն-
ել ապահովագէտ, ու ինչ հետ ուրիշ-
ներ ալ երախտագէտ պիտի մնան առ-
շինքի: Երբեք չենք ընթացաւորտին
ու Դէս ու Դէն յեղ. յառաջխաղացու-
թեան կերպին վրայ կարծիք յայտնե-
լու նախաձեռնութիւնը ունենալուն
համար: Ազգային ազատագրութիւն տե-
սակէտով գերազանցողն չանկան ու
հրահանգիչ է այս յաղթելի անձնաւոր-
ութեանց քրքրած հարցը, որուն ար-
ժէքը չիմ կարծիք որ օխոյոյնը գտն-
ուելին:

Կը կարծեմ սակայն թէ Պ. Աղասի
աւելի մեր արդի իրական կացութիւ-
նը ներկայացնելով գոհացած է, ա-
ռանց այդ կացութիւնը դարմանելու
միջոցները յստիկ կերպով մատնաչի-
լու, ու Դէս ու Դէն կը բաւականա-
նայ յեղափոխութեան գիւղականաց-
կան միջոցներու հետ համընթաց ա-
ռաջանալէն ծնելիք օգուտները չեղա-
լով:

Կ'ըմբռնում իմաստուն կոխը- բայց
իրապէս, ինչ բանի մէջ կը կայանայ
ու որ պարագաներով կը սահմանուի
ճշդիւ իմաստնօրէն կուտուլ, խոհա-
կան ու շրջանայեաց կերպով պայքա-
րելու այդ բանաձեւը. հաւանօրէն իւ-

րաքանչիւր կուսակցութիւն իր գոր-
ծելակերպը գովելի պիտի հաշակէր, ու
կազմուածքի, դաստիարակութեան,
փորձառութեան երբեքի տեսակէտե-
լով, ամեն անհատ իմաստնագոյն պայ-
քարը մղելու իր ուրոյն ըմբռնութեան-
ը, ուրոյն շարժառիթները պիտի ու-
նենար, ինչ հետ շատեր պիտի չլծերա-
նային հասնօրէն մաղթելու որ սովոր-
ական անհատներէ բարձր դաստիար-
ակութեամբ ու հմտութեամբ օժ-
տուած անձնաւորութիւններ այս առ-
թիւ իրենց կարծիքը յայտնէին, երբ
այսօր վստահօրէն չենք տարակուսի
մեր յեղափոխական վարչներուն մը-
տային ու քաղաքագիտական կազմու-
ածքին իսկական արժէքին վրայ:

Ազգային յեղափոխութեան ու մի-
ջազգային գիւղականացութեան ներգոր-
գործակցութեան միայն ու միայն մեր
ազգը իր դարաւոր հեծեալներուն
դարձուած, ու ազգային ուրոյն կազ-
մակերպութեան մը բացումը կրնայ
ակնկալել:

Գաղափար գոր այս էջերուն մէջ իսկ
արտայայտած էի, եւ ուրախ եմ որ
այս մասին Դէս ու Դէնի բացարձա-
կապէս համակարծիք կը գտնուի:

Սակայն որն է յեղափոխութեան
պայքարելու նախընթացի կերպը, երբ
ու ինչ պայմաններու մէջ գիւղականաց-
իտական միջոցները իրենց գերազօր
օժանդակութիւնը մեզ կրնան ապահ-
ովել:

Վասնզի ինչպէս յեղափոխութեան
մէջ, նոյնպէս գիւղականացութեան մի-
ջոցներու ալ յաջող ու ձախող, փրկա-
կա ու կորստաւոր գործածութիւնը
կայ. իմ մասին, նկատողութեան առ-
նելով, օրինակի համար, Դաշնակցա-
կան կուսակցութեան Պ. Գրիգորի միջ-
նորդութեամբ Պ. Տէլքասէի բրած գի-
մումը մասնաւորապէս, պիտի տարա-
կուսէի զմազդարար Դէս ու Դէնի
պէս հաւատալ թէ, իրենց գոյութեան
երկար շրջանին մէջ էն շնորհաւորի
գործը բրած ըլլան, գոյց է'ն դա-
տապարակելի իմ կարծիքովս:

Որպէսզի չի կասկածուիմ Դաշնակի
այդ զիմումը կանխակից համոզումի
մը մէջէն մեկնելու, կը փութամ ըսել
թէ, իմ այդ երթագրութեանս մէջ կը
ձայնակցիմ Դաշնակցութեան աւելի
համակիր քան հակակիր ճանչցուած
հրապարակագիր մը, արդարեւ «Սիւլա-
մը» խորագրով մէկ յոգեւածովը, Տ.
Մ. Չերազ իր հայրենասիրական ամ-
սաթիւթիւն մէջ կը քննադատէ — չնոր-
հավար բառերով, քանի որ է ըսել —
Պ. Գրիգորի արտաքին գործերու նա-
խարարին մօտ ըրած գիմումը, Դաշ-
նակցութեան անուամբ հայկական նա-
հանգներու համար բարենորոգմանց
թիւեւագոյն ծրագիր մը ներկայացնե-
լու համար: «Դաշնակցութեան կուսակցու-
թիւնը, կը գրէ Տ. Չերազ, հաշտ աչ-
քով չդիտուի Պիքիսի գաղանգները
ստորագրող պետութեանց շատերէն,
որոնք անհրաժեշտօրէն հակադիմադր-
ական են»:

Տարօրինակ զուգադրութիւն, երբ
Դաշնակի խմբակին համակիր ճանչ-
ցուած անձ մը, որ սակայն ազգային
պարտականութիւնը անձնական հա-
մագոյններէն դարձաւ աւելի հաւ-
րենասէր է, կը դատապարտէ Դաշնա-
կին այդ գիմումը, մինչ Դէս ու Դէն որ
վստահօրէն նոյն խմբակին համակիր
մը չէր կրնար ըլլալ, այդ գիմումը
խանդավառութեամբ կը շնորհաւորէ
ու կը ... ծափէ:

Ես սակայն բոլորովին տարբեր տե-
սակէտով մը նոյն գիմումը դատապար-
տելի կը գտնուի. Պ. Գրիգոր Թրանսայի
նախարարին յայտներէ Դաշնակցութեան

նկրու որոշումը յեղադրական ընթաց-
քի մը հետեւելու, այն պարագային
երբ պետութեանց կողմէ հայկական
խնդիրը նկատողութեան չառնուի:

Այդ յայտարարութիւնը ինչ կը յի-
շեցնէ հիւսիս տարիներ առաջ նոյն կու-
սակցութեան կողմէ նմանօրինակ յայ-
տարարութիւն մ'այլ, որուն հետեւան-
քը Պոլսոյ կոտորածը պիտի ըլլար:
Հիւսիս Դաշնակի այդ գիմումը շնորհա-
ւորելի, ծափելի նկատուէ, կը մտա-
ծեմ թէ Դաշն. վարչները անկարող
են իրենց ամենէն աւելի ձախուելի
քայլերէն իսկ ուղղուելու. տակաւին
չեն կրցիր ըմբռնել որ իրենց Պոլսոյ
սպառնալիքը յամաճրող այն պետու-
թիւնները Պ. Գրիգորի բերնով իրենց
նոր սպառնալիքին առջեւ ալ տեղի
չեն տար, եթէ ուզեն. այդպիսի ըս-
պառնալիքներ, ընդհանրապէս, հաւա-
սարապէս գիւղականացութեան շրջանակ-
ները ու հասարակաց կարծիքը մեզ
զէմ գրգռելու հանգամանք միշտ կու-
նենան, մինչ մեզ ալ համոզում գոյա-
ցնել կուտան թէ այդ կուսակցութիւ-
նը զիւր չէ հրաժարած օտարներու ինչ
քին ու կեանքին սպառնալիք, խառնա
կուսութիւն ձգելը, ազգի մը յեղափոխու-
թեան հետ չփոթելէ: (*)

Հոս պէտք կըլլայ ազգի մը յեղա-
փոխութեան զանազան բուերը ու
ձգտումները սահմանագծել:

Տ. Է.

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻՍԵՆ

Ինքզինքը «Հայաստանի Բարեկամ-
ներ» յորջողող անդրախական հայասէր
ընկերութեան, որ ծանօթ է մեզ ի
վաղուց իր մարդասիրութեամբ, հոգ,
Ձին իր երեք պիւստոյ մասնաճիւղե-
րու տարեկան համագումարը տեղի
ունեցաւ Գարտիֆի մէջ, ընդ նախա-
գահութեամբ Լէւոնտի պատուարժան
եպիսկոպոսին և ի ներկայութեան
երեք ճիւղերու պատկանող ներկայա-
ցուցիչներու: Ինչ որ տեղի ունե-
ցաւ ժողովին մէջ անդրախական մա-
մուլը հրատարակեց, կարծիք որ հա-
ղորդելու իրաւունքով ընթերցողաց ալ:

Ժողովին բարեհամբաւ նախագահը
իսկզբան իր խորին շնորհակալու-
թիւնը յայտնեց որ արժանաւորութիւն
պիտի ունենար այդպիսի բարեգոր-
ծական ընկերութեան մը նախագա-
հելու և լսելու այնպիսի Օրիորդի մը
խօսքերը որ տասնութ տարեկան եր-
կար կենցաղ մը անցուցած է և ա-
կանատես եղած է այն ամեն վայրագ
ու բարբարոսական գործողութեանց
որ անընդհատ ի գործ կը գրուին այդ
քաղաքականագէտ զօրիք դարձած
երկրին մէջ:

Օրիորդ ձէնքին ընկերութեան եր-
րորդ տարուան տեղեկագիրը կարգաց-
որ մասնաւորապէս պատրաստուած էր
դատաւարակելու այն անկար որբեր
որ 1896ի աղետալի կոտորածներու
ժամանակ կորսնցուցած էին հայը,
մայր ու բոկոտն հոս հոն է թափա-
ռէին ողորմելիօրէն: Տ. Տօւն լիւա-
մտական հաշիւը ներկայացուց ապա-
պէս. — Գարտիֆի մասնաճիւղը ստա-
ցած էր 82 անգլիական ոսկի, Լան-
տալ՝ 13 ոսկի և Բենարդ՝ 76 անգլ-
լիական ոսկի: Ընդ ամենը 170 անգլ-
սկիոյ բաւական գոհացուցիչ գումար
մը մտած Ընկերութեան մայր—սըն-
տակը:

Ընկերութեան քարտուղար Օրիորդ
Պանդոյ հետաքրքրական բանախօսու-
թիւն մը ըրաւ իրենց գործունէու-

(*) Տիար Տ. Է. արդեօք որ կար-
գացած է թէ Դաշնակցականները ի-
րենց վերջին գիմումին տաթիւ օտար-
ներու ինչքին ու կեանքին ալ սպառ-
նացած են:

ԴԻՏ. Խմբ.

թեան մասին որ խորին ուղարկու-
թիւն թողուց ունկնդիրներուն վը-
րայ : Ազնիւ Օրիորդը մի քանի անո-
ւարկութիւններ ըրաւ ընկերութեան
յառաջդիմութեան ու շարունակու-
թեան համար , խրախուսելով Գար-
սիֆի մասնաճիւղը հետեւել իտին-
պուրկին , հայկական ասեղնագործա-
կան ապրանքներու վաճառանոց մը
հաստատելով : Յետոյ խորապէս սրտի
վշտով խոցուած՝ ըսաւ թէ ինչ ոգուտ
կրնին այսքան տարուան յարատեւ
անձնութիւնները , ջանքերը ու
մարդասիրական գործողութիւնները ե-
թէ թուրք կառավարութիւնը անոնց
ամսջելու պաշտօնական հրահանգնե-
րով կը շարունակէ իր հայալինջ սիւ-
սէմը ու կը քանդէ միւր նորոգածները .
ինչպէս կը վկայեն Սասունէն տեղե-
կագրուած վերահաս ստուգապատում
վարագրութիւնները : Եւ կը նախա-
տեսուի որ ընկերութեան գործունէ-
ութիւնը մինչեւ 1911 թ. վերջը պիտի
տեւէ , բայց եւ այնպէս մինչեւ այդ
ժամանակ բազմաթիւ որբեր կան պա-
տապարհիւ : Հետեւաբար ազնիւ Օրի-
որդը թախանձագին խնդրեց որ ամեն
գործնական միջոց չխնայուի գոնէ
առժամանակեայ կերպիւ ընկերու-
թիւնը կանգուն պահելու համար :

Յետոյ Բոթֆ. Պոնովոյ շնորհակալու-
թիւն յայտնելով ազնիւ Օրիորդին
քաջալերական խօսքերուն , ըսաւ թէ
մեծ դժբաղդութիւն մը պիտի ըլլայ
այս ընկերութեան քայքայումը որ
ստեղծուեցաւ 1896 թ. կոտորածներու
առթիւ : Ինքը վստահ է թէ կիւրո-
նական կոմիտէն կրնայ այնպիսի զո-
րաւոր կերպով կարգադրուի որ ապա-
քայ խփոթութեանց ու վերահաս վը-
տանգներու ժամանակ կարող ըլլան
գործել զօրաւոր ու ազդու միջոցնե-
րով զանազան քաղաքներու մէջ , ըն-
կերութեան մասնաճիւղերը յայտնա-
կարող կը լինին հասկնալ բոլոր գաղտ-
նի ազդեցութիւնները , ինչպէս Սուլ-
թան Համիտ 1898 թ. ծածուկ մեթոտ-
ներով ուղեց խոջիդան կանգնել Հա-
յոյ ի նպաստ եղած ձեռնարկներուն :
Յարգելի Բոթֆ անհատապէս կարծիք
յայտնեց թէ որչափ որ այդ ընկերու-
թիւնը ամուր հիմնուի վրայ հաստա-
տելի այնչափ ալ Հայ ազգին նպաս-
տաւոր ըլլայ :

Իւրաքանչիւր մասնաճիւղի ներկա-
յացուցիչ իր մասնաճիւղին տարեկան

տեղեկագիրը ներկայացուց հաւատար-
մաբար ու ժողովը վերջացաւ հայ-
կական ձեռագործութեանց վաճառու-
մով մը : (*)

Առ այժմ Հայաստանէն եկած լու-
րերը ամենքն ալ դրեթէ միօրինակ
ու կասկածաւոր են : Բայց եւ այն-
պէս միշտ պակաս չեն աղիւսալ լու-
րեր : Հայաստանէն ուրիշ անդիւի-
ական բնդհանուր թերթերու մէջ քն-
նալիս կը վաւեր : Ամեն ալ արդի
Հայաստանը քաղաքականապէս սպան-
դանոց մը կը ներկայացնեն : Այս
մասին անդիւիական ժողովրդական
թերթ մը կը հաղորդէ թէ առեւտրա-
կան «Նովոյե Լիբերալ» թերթը հրատարա-
կած է զօրաւոր յօդուած մը յիշատակ
այդ անեղականայիլ բարբարոսու-
թեանց դէմ : Յիշատակ թերթը կրտէ
թէ անպատեհ միջոց մը խորհուր-
այդ անվերջանալի խռովութեանց դար-
ման տրուելու համար :

Բազմաթիւ հայ փախստականներ
անկարող տոկալու քրդական ծայրա-
յեղ հարածանաց , ազնիւ փախած են
կովկաս :

Համագաղապ
7 հւտ. 1911
Լոնտոն

ՐԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՎԵՍԷԼՈ ԽՈՒՄԲԵՐ
ՏԻՍՐ ՎԱՅՆ ՊԱՊԱՆԱՆ

Ապագային թողով Վէսէյո խուճին
նկատմամբ մեր ամբողջական քննա-
դատութիւններու շարքը , հիմնաւ-
հիմա կը փափագիմ այդ խուճինը դե-
րասանները հրապարակ հանել զատ
զատ ու նախ ճանչցունել զանոնք հա-
տարակութեան , իրենց իսկական ար-
ժանիքովը : Կարծէ այս շեշտուած կա-
րեւորութիւնը տալ միակ հայ խուճ-

(*) Դժբաղդաբար աղքատ հայուհի
ներու անուանով հոս կամ ուրիշ տեղ
պատրաստուած այդ ձեռագործները
անհատներու քաղցրեւ պարտադրու-
թեան կը ծառայեն : Նը յուսանք թէ ի
մօտոյ ստիթը պիտի ունենանք այդ
տիւրու իրողութեան վրայ լոյս սփռե-
լու :

Ծ. ԽՆԲ.

ԹԵՐԹՈՆ «ԻՐԱՆԻՆԻՔ»Ի (24)

ԳՆՈՒՆԻ

(ԵՆՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

— Ընկերներ , ըսաւ Գնունին , ամեն բան վեր
ջացած է : Պատրաստուեցէք . . . Քաջութիւն չէ կը-
ռուիլ , այլ քաջութիւնը մահուան հանդէպ չխո-
նարհիլն է : Ինչ էր մեր նպատակը . . . չէ՞ որ կու-
ղէինք մեր թշնամիներու դիակները տեսնել : չէ՞ որ
այդ բոլորը կատարուեցաւ . . . : Հիմա միանելու ժա-
մըն է : Այլ եւս ուրիշ մտածում մը չկայ :

Երիտասարդները յայտնեցին թէ պատրաստ են
մեռնելու :

— Ուրիմն առէ՛ք այս փոքրիկ սրուակները :
Սրուակներու մէջ թոյն կար , զոր անյապաբար
ծծեցին երիտասարդները :

Գնունին ալ սրուակ մը պարպեց :
Ո՛հ , աղէտալի վայրկեան . . .

Երեք երիտասարդները շատ չի տանջուեցան ,
այլ կէս ժամուան մէջ զետիւն փռուեցան ու մե-
ռան . . .

Իսկ Գնունին կատաղութեամբ պատշգամն ե-
լաւ , տիւնամիտները գինուորներու մէջ նետեց ու
պողաց :

— Սուլթան , գարշելի
Սուլթան , քու զուտկ-
ներդ եւ կերայ . . . բայց
բիշ է , վրէժներս ալ կը
թողում . . .

Ու թոյնի ազդեցու-
թեանը չըստանալով , վեց
հարուածը բերին զրաւ
ու պայթեցուց ուղեղը :
Ամբողջ ժամ մ'անցաւ :

Զինուորական հրա-
մանատարը գետ չէր հա-
մարձակեր ներս մտնելու
մինչեւ որ տունին ըն-
տանիքները փողոց նետ
ուեցան ու անձնատուր
եղան :

Ատոնք ամեն բաները
յայտնեցին . . .

Յայտնութեան յետոյ
վերնայարկը ելնելու հա-
մար այդ ընտանիքնե-
րու առաջնորդութիւնը
խնդրեցին :

Զինուորական հրամա-
նատարը երբ զինուոր-
ներէն վստահութեան նը
չան տուաւ , ան տեսն
ինքն ալ վերնայարկը
եկաւ :

Երեք երիտասարդնե-
րու մարմինէն քիչ մը
հեռու ինկած էր նաեւ
Գնունին . . .

. . . Արմեն—Շիսան
ՎԵՐՋ

բին , որ կը փայլի պուրկարական իշ-
խանապետութեան մէջ՝ բազմաբար-
իւր անժխտելի առաւելութիւններովը ,
մանաւանդ այն պահուն՝ ուր դեղաբ-
ուեստի այս ճիւղը՝ զգալիաբար
կիչնայ մեր մէջ , վարպետ գերասան
ներու հետգնեւտէ անյայտացումին հետ
մէկտեղ անձնակներուն ալ պիղծ ար-
շաւանքովը :

Բայց պէտք է խոտովանիլ՝ թէ
վարպետ մըն է Պապանան :

Քսան օր առաջ՝ առաջին անգամն
էր , որ Վէսէյո խուճը ունկնդրե-
լու հաճոյքը կուսնեայի , չիտակը խո-
սի՞մ , տարտամ ու անբացատրելի հա-
կարանքով մը նախապաշարուած ,
ղէպի Պապանանի անձը՝ բեմէն դուրս
Անիկա առաջին ներկայացումն իսկ ,
բէմին վրայէն գիացաւ ստեղծել պէտք
եղած կազմութիւնը հոսանքը եւ ջնջել
այդ անշարժառիթ ու թոյլ հակակ-
րութեան հետքը , իմ ներքէն :

Երկրորդ ներկայացումն , յարգանքի
բուրգը կանգնուած էր արդէն իմ մէջ ,
իրեն նկատմամբ :

Մանրուք ու բացատրիչ ձեւերը ,
գիւրաթեք ու ճկուն շարժուածքները ,
գէմազմային արտայայտիչ ծամածոտ-
թիւնները , հոգեկան տաքնապ մը
վեր հանելու համար ձայնին տուած
թերթումները , յուզիչ շնչաբեր եւ
վերջապէս հակառակորդի , կամ թըշ-
ուառական որճաբործի մը բոլոր հը-
րէշութիւններուն իւրացումը՝ Պա-
պանան կրնին իրաւքնէ բեմին այն
մարդը , զոր կարծէ ծափել խանդա-
գին , երբ մանաւանդ անդին՝ անոր
փայլուն աստղերէն մէկն ալ կիչնայ
այսօր եւ բեմական պարապի ծաւալը
կընդարձակի հետգնեւտէ մեր շուրջը :
Հէ՛գ Ֆասուլիսեան . . .

Տիար Պապանան՝ թո՛ղ ներէ սա-
կայն , որ գեղեցկապաշտի խանդա-
վառ թափով մը տակաւին անփրկե-
լիւրէն չիկնած հիացման ցանցին մէջ ,
աճապարեմ իրեն ներկայացնելու եր-
կու անկեղծ դիտողութիւններ , ո-
րոնք չեմ կարծեր թէ անողուտ ըլլան
իր վճռական վերելքին համար :

Նախ՝ չը չափազանցիլ : Զը չափա-
զանցել մանաւանդ ձայնի շնչաբերուն
մէջ , որոնք՝ առանց այդ չափազան-
ցութեան ալ , այնքան գեղեցիկ են եւ
ազդու :

Երկրորդ՝ բեմին վրայ ելնադրել
միշտ , որ ինք՝ իր թէ բարձրագոյն
մօնէի մը առջեւ կը գտնուի եւ անոր
համեմատ կարեւորութիւն տալ իր
գործին . . . : Այս փրկարար ենթադ-
րութիւնը ապահովապէս պիտի պիտի
առաջնորդէ նմանօրինակ մօնէի մը
ծափելի գերասանը ըլլալու բարձրու-
թեանը :

Յետոյ , եթէ կը հաճի , ընդունիլ
խորին յարգանքս՝ իր վարպետի տա-
ղանդին :

Ծափ ու Սոյլ

«ԻՐԱՆԻՆԻՔ»Ի ՊԱՏԱՍ ԽԱՆՆԵՐԸ

—) —

— Ա. Մկրտիչ . Սվիլենաց . — Ստա-
ցած էր ձեր 10 ֆրանկը :

— Վ. Յով . Այստա . — Ձեր հաշույն
մեզ դրամ չէ հասած . ուղղակի մեզ
ղրկեցէք 16 ֆր. ձեր պարտքը :

— Տ. Կ. Քէօսաէնճէ . — Խօսեցանք
որ ձեր ուզած գրքերը զրկուին : Եր-
գարանները քանի մը օր վերջ կը-
ղրկենք :

— Ս. Մ. Գարա Էօմէր . — Ինչպէս
ձեզ , նոյնպէս ուրիշներուն երկտու-
ղերով իմացուցինք իրենց քանի ֆը-
րանկ պարտք ունենալը մինչեւ զեկ-
տեմբերի վերջը : Լրագրաց բաժնե-
գիրները աշխատի որ կողմ որ երթաք
կանխիկ են . ուստի վճարումը տար-
ւոյն մինչեւ վերջի ամիսը յետաձգե-
լու իրաւունք չունիք , եւ արդէն
ներկայ տարեշրջանի տասներորդ ա-
միսը թեւակոխած ենք

— Սիւթովէն Ռոտոսթօցի Թորոս
Պէկլիանի նկատմամբ մեզ նամակ գը-
րող անձը թող հաճի իր ստորագրու-
թիւնը մեզ գրելի , որպէս զի իր ամ-
բաստանութիւնը նկատողութեան առ-
նուի :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պալսոյ Պատրիարքարանի ժողո-
վականաց մէջ այս միջոցիս անհա-
մաճարնութիւն կը տիրէ : Կրօն
Ժողովոյ երկու ատենապետ Սըր-
բաղանները , ասոնց հետ կրօնա-
կան անդամներուն մեծագոյն յմա-
սը , կը հակառակին Օրմանեանի
Դրան հաճոյակտուար ընթացքին .
այս պատճառաւ երկու ատենապետ
ները ժողովոյ չի գոյցին : Ուր-
բաթ օր ալ խոսն Ժողով հրաւի-
րուած լինելով , բոլոր կրօնական-
ները , բացի Պատր. փոխանորդէն ,
կրկին չի ներկայացան ժողովի .
միայն քաղաքական ժողովոյ ան-
դամոց մեծամասնութիւնը ներկայ
էր , որով չէր կարելի ժողովը օրի
նաւոր նկատել : Բայց Օրմանեան
հացկատակ աշխարհական անդամ-
ներուն զուխը անցած ուղած ձե-
ովը օրակարգի խնդիրները կար-
գադրեց : Այդ խնդրոց մէջ էն
կարեւորը դատական նախարարու-
թեան հասած «Թէղթէրէ»ին պա-
տասխանելն էր , այդ տլ Օրմանեան
կանխաւ պատրաստել տուած ըլլա-
լով , աննշան փոփոխութիւնով մը
նախարարին մատուցանել որոշուե-
ցաւ . սա կը պատկանէր վարչու-
թեան կրկին ժողովելու պաշտօ-
նավարութեան կամ Ազգ. Սահմա-
նադրութեան էական կէտերու փո-
փոխութեան :

— Ասորինքը կրկին խնդիր հա-
նած են Երուսաղէմոյ Ս. Յարու-
թեան տոճարին Հայոցս յատուկ
մէկ մատուռին համար , իբրեւ ի-
րենց սեփականութիւնը . մինչդեռ
հայ Պատրիարքները հին ատենէ
ի վեր զիրենք հիւրասիրած են
նոյն մատուռին մէջ իբր դրացի եւ
դաւանակից ու խնդ ժողովուրդ-
մը . այսօր հիւրը տանտէր ըլլալ
կը ջանայ :

— Պաքուի մէջ առեւտրական
տաքնապ տիրելով , քարիւղի գոր-
ծով գրազող շատ վաճառականներ ,
որոնց մեծ մասը հայ , հետզհետէ
կը սնանկանան , ճիշդ այս պատ-
ճառաւ Պաքուի հայ թաղերու-
լուսմըն ալ պիտի ցուի եղբր :

— Պարսկահեղկաստանի Առաջ
նորդութիւնը Սահակ եպիսկ. Այ-
վատեանի յանձնուած է :

— Ուսումն . խորհուրդը որոշեց
Տ. Ռէթէոս Պէրպէրեանի ուսուց-
չապետի տիտղոս տալ , իբր բրօ.
Ֆէսէօրութեան տատիճան :

Պէրպէրեան վարժարանի քսոն
հսինչ ամեակը պիտի կատարուի
ճիշդ հիմնադիր-ուսուցչապետին
տօնալմբութեան օրը , 27 հոկտ .

— Ազգ. հիւանդանոցի հոգաբար-
ձութիւնը լաւագոյն սիկարի թըղ-
թեր պատրաստել տուած ըլլալով ,

կոչ կրնէ ծխող աղագայիններու որ անպատճառ Հիւանդանոցի թուղթերէն գործածեն. գինեքը խիստ չափաւոր և գոհացուցիչ են:

—Նոյն հոգաբարձութիւնը հըրապարակ հանած է Աղգ. Հիւանդանոցի 1902 տարւոյ պարզ Օ. րոյցը:

—Տօգործի Աղգ. վարժարանի այս տարի վերաբացումը կոսկածի տակ ըլլաւ և պատճառաւ, շատեր իրենց վաւակները Պուլկաւաց վարժարանը զրկել սկսած էին. գոհութեամբ կը լսենք որ թէ՛ հրապարակային և թէ՛ մասնաւոր յորդորները իրենց արգիւնքը ունեցած են, ու այժմ աղաքը Աղգ. վարժարան կը դառնան:

ՀԱՎԱՍՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԳԻԱ

Էրմէնիստան

Սեպտեմբեր 24 թարիխի Նօվօսի րուս կազէթատնա Սթան. պօլտան պիտիբրիմի տիր:

«Գոնսուլարըն րաբօրթլարը Էրմէնիստանըն հալի բէք զարը. չըք կէօթէրմիլէր տիր: Էյնիլէր պիր գոնֆէրանս թէչքիլի իլէ, պու մէսէլէ իւզէրինէ պիր գարարը գա թի վէրմէք վէ միւտալէլէ իթմէք իչիւն միւզէքէրէ իտիօրլար»:

—Մէլքիւր կազէթանըն Սեպտ 26 թարիխի նիւսէսինտէ թէքրամ Սթանպօլտան պիտիբրիմի տիր:

«Բուս վէ ինկիլիզ էյնիլէրի Պապը Ալիյէ միւրաճաթլէ, Էրմէնիստանըն շու գարըչըրըք վէ թէհիլէլի հալինէ գաթիլէն վէ տէրհալ նիհայէթ վէրիլմէսինի թալէպ իթմիլէր»:

—Սթանպօլտան Էրմէնիստան Պէլթէ պիտիբրիմի տիր:

«Գոնսուլարըն րաբօրթլարըն պինաէն, Տրապիզոնտ, Սամսոն. տա վէ սոյիբ Գարատէնիլ սահիլ. Էրինտէ, իւլէմալարըն թէչիլիգի սէպէպի իլէ, խրիսթիանլարա գարըն հարէքէթլէր վուգուինտէն գօրգուլմագտա տըր»:

—Թէքրար Էրմէնիստան. Պէլթէ Սթանպօլտան հազըլմըլ տըր:

—Բուս էյնիլի չօգ տէֆալար Սուլթան իլէ միւրաճաթլտա պուլընտը. րիվայէթէ կէօրէ, իշպու միւրաճաթլ ֆրանսա մէսէլէսինտէն տօլայր օլմայուպ, Էրմէնիստան ահվալինտէն պահս օլընմըլ վէ էլ չի պու պապտէ էնվալի թէպլի-գաթ ու թէքլիֆաթտա պուլընմըլ տըր: Փագաթ պուլընտըն նէտէն իպարէթ օլտըրը անաշըլմամըլ տըր»:

—Աթան Պիլկարըն Սթանպօլտան Սեպտ. 30 թարիլիէ ալտը. զը թէլէկրաֆ իւզրէ, ճուս կիւ. նիւ Սէլմալըգտան սօնրա Բուս էլ չիսի Ս. Ջինօվիէֆ Սուլթանըն հուզուրըն չըգուպ, պիր սաաթ

միւրաճաթ իթմիլէր. էլի՛ Մուշ սանճաղընըն բէրուշան հալինի վէ ֆիւրտլէրին չօգ Էրմէնիլէր թէլէֆ իթմիլէրին վէ սոյիբ ուլկուսըլ-լըզլարը պէյանիլէ, պու տէֆալար գաթիլէն վէ տէրիտն նիհայէթ վէ. րիվէսինի իզթիլպաւընտէն պահս իթմիլէ տիր:

Մակեդանիա

Կէչէն հաֆթա Մակեդանիալը. արըն Սթանպօլտա 20000 քիշի. տէն իպարէթ պիր միթինի թէչ. քիլ իթմիլ օլտըրընտա տայիբ Էրմէնիստան. Պէլթին սէհվիլէթինի թաալիպ իտէքէք իքէն՝ տըգաթ. սըզլըզլէ տէնէն տէրճ իթմիլ ի. տիր: մէլքիւր միթինի Սօֆիատա օլմուշ տիր: Գէզա պու բազար կիւնիւ չէհրիմիգտէ տալի Պուլկարար ալիբ մաալ վէ մապէտլէ պիր միթինի թէքէմիլ իթմիլէր:

Պուլկարար տալիլի հէր պիր բարթիզանլըք վէ թարաֆտար-լըք պերթարաֆ իտուպ, Մակե. թոնիալը պիրատէրլէրինի իսլահը հալը իչիւն Պուլկարիպ հիւքիւմէ թինէ էյնիլէր ճիհէթ գուզվէթ վէրմէյէ հազըր պուլընտըրընը վէ անըն պու պապտէլազըմ կէլէն միւրաճաթ վէ թէտապիրի իթ. թիսալ իթմէսինի թալէպ էյլէ. մէքտէ տիրլէր: Գէզա Էվրոս տէվլէթլէրինէ միւրաճաթլէ Պէր ին ահտնամէսինի ահքամընը Մակեդանիատա իճրա իթմիլմէ. Էրինի իտտա էյլէմէքտէ պուլը. նըյօրլար:

Ճալիպի տըգաթ նօգթոմ շու. րասը տըր քի՛ էօթէտէն պէրու. Էրմէնիստան մէսէլէսի զուհուր ի. տէր իթմէլ Պուլկարար անը պիր ֆըրսաթ տտա իտէրէք տէրհալ քէնտիլէրի տէ միթինիլէր վէ սա. իր միւրաճաթլար իլէ Մակե. գոնիա մէսէլէսինի իլէրի սիւրմէ. յէ թէլալ իտուպ, անտէն իսթի-ֆատէ իթմէյէ գալըչըրլար: Պուլ կարարըն պու ֆըրսաթէրէստիկի վազիֆէչինսալըգտան իլէրի կէլիւր օլտըրըն իթիւրաֆ իթմէքտէն մա. տա, հիշ պիր իթիւրաղըմըք հօգ տըր. աքսի օլարաք անլէրին պու. աուլիուսընը ալքըլլամալըլըք:

Փագաթ, նասըլ չօգ տէֆալար, թէքրար պու կիւնլէրտէ տէօքիւ-լէն գոն պիլիմ օլտըրը հալտէ, Պուլկարիտա վէ խարիճտէ իւլ. թէմէքին միլլէթտալարըմըք վա պիֆէսիլգէ քէնտիլէրինէ սէյիլըն սըֆաթը վէրուպ օթուլմալարը թայիպ վէ թէքսիլֆ օլընմադ հալ տըր: Պիլիմ չէրկէմիլ թու. թուլմուշ, ալէմ օնըն չաֆը իլէ իշ կէօրմէյէ չալըչըր: պիլ վա. զիֆէսիլգէ օթուլմուշ սէյիլ իթ. մէքտէլիլ, Պու հալը խարիճտէքի միլլէթտալարըմըք վէ խուսուսի Պուլկարիտալէր Էրմէնի կէնճիլ. րիմիլ տիւչիւնիլպտէ, իճրաի վա. զիֆէ իթմէլէր իսէ Պուլկարար. տան վէ էնէպիլլէրտէն ութմանա. յու մէպուր տըրլար:

—Ամիլիկալը մատմուալէ Սթ. նը գուլթարմադ իչիւն թալէպ օ.

լընան 25000 լիւրայը Մ. Ամիլի. կա տէվլէթի Սթանպօլտալէ էլի սինէ թէվաի իթմիլ տիր: Պու մէսէլէտէն տօլայը պապը Էվրոս վէ Ամիլիկա ճէրիտէլէրի Պուլկա րիայը տալի մուսալէլէ իթմէք իսթիօրլար: Փագաթ Էքսէրիսի պու խուսուստա Պուլկար հիւքիւ. մէթի հիշ պիր ճիհէթէ մէսուլ օլմալաճաղընը կէօթէրիօրլար, վէ մէսուլիլէթի հալընըք թիւրք հիւքիւմէթինէ համլ իտիօրլար, իշպու մէսէլէտէն տօլայը Բարիլ. տէքի Մ. Ամիլիկա էլիսի տալի Սթանպօլա կէլմիլ տիր: Շագիլէր Սամաթօֆտար իտիւրիլալը միսի. նէր իլէ մուսալէրէտէ պուլընտալ 25000 լիւրայը յետան իսթմէք. տէ օլտըրընտան, մէրգուլ էլ. չի իլէ միւզէքէրէ իթմէք իչիւն Սթանպօլա կիթմիլ տիր: չիմտի հէնիտէն Սամաթօֆա ալտէթ իթ. միշ օլուպ, բարա իչիւն չազիլէր իլէ բազարըլա կիրիշէքէկի վէ միսիօնէրլէրին գօրգու վէ տէհէթ իչիւնտէ պուլընտըլը հազըլմըլ:

—Նաֆիա նազըրը Ջիհի բա. շանըն Սատրաղամ թային օլընա ճաղը միւրէվի տիր:

—Էլէվմ Սթանպօլտա պուլը. նան Բարիլ օսմանը էլիսի Միւ. նիլ պէլէ Երլտըլտա մէմուրիլէթ վէրիլէքէկի, վէ Նուրի պէլին Բա. րիլ էլիսի թային օլընպաղը մուպարէր կէօրիւնիօր: Մէր. զուլ Նուրի պէլին բէտէրի ֆը. րանսըլ գօթ Պիսէ տը Շաթօ. նէօֆի նամ շալս օլուպ, կէնճիլ կիւնտէ Սթանպօլա կէլէրէք, պիր թիւրք գըզընա աշըք օլմուշ, վէ իսլամիլէթի գապուլլէ անըն իլէ իզտիվաճ իթմիլ տիր: Մալտու. մը Նուրի պէլ տալի Բարիլտէ իթմալը ուլում իթմիլ զէքի պիր գաթ օլտըրը պիտիբրիմի տիր:

—Ահմէտ բաշա Գիլէ կիթմիլ օլուպ, Գիւլպ ֆապրիգաւընա սէ. քիլ տտէտ թօրիլէօր իչիւն թօր. ար սըբարիլ իթմէքտէ տիր:

—Սեբախիա գաշըլ օլան Սըրպ արըն ալտէթ իտէպիլմէլէրի ի. չիւն հէնիտէն իրատէ սուտուր իթմիլ տիր:

Ալպանիա

Տէպրէտէ վէ Էրպէլատա Սը. նաֆուտարըն սանտա պուլընտալ, միւլիւսարըք աքէրլէրին մուհա. ֆաղասը իլէ գոնալընտան տըշա. րը չըգաճալընըք, վէ տալիլի իտուրէ էհալիտէն թային օլընան արնափուտ մէմուլարըն էլինտէ օլուպ, տէվլէթ վէրիլ վէրմէք գարարընտա պուլընտըլարընը «Նօվօթի» հազմագտա տըր:

Ֆրանսա վէ Թիւրքիա

Լօրէնտօնըն մաթլուպաթը (350000 լիւրա) մէսէլէսինէ պիր գաթի ճէ. վալ վէրմէք իչիւն Ֆրանսա Պա. պը Ալիյէ հալընըք 48 սաաթ միւ. սատէ վէրմիլ օլտըրընտան, մէ. լիսի վիլքէլա տէրհալ թէքէմիլ. օլընտալ, ուլուլ միւլէքէրէլէրտէն սօնրա, ֆրանսըլարըն թալէպի ֆահիշ կէօրիւլմիլ. ֆագաթ միւ. նասէպաթը բօլիթիլիլէր թալի. լէմէք իչիւն մէլքիւր մէպաղը Սուլթանըն գապուլ իթմէսի մի. նասիպ աաա իտիլմիլ տիր:

Միւնիլ պէլ Ֆրանսըլ թալէ. պաթընըն Սուլթանտան գապուլ օլընմաղընը պէլանլէ, հալընըք, մէլքիւր ագէթ թէտարիք իթմէք իչիւն ալ պիր միւտտէթ միւսատէ վէրիլմէսինի թէքլիֆ իթմիլ տիր:

Փագաթ տիկէր պիր հաֆատիւ պինաէն, Մուլթան էլան պու մ. սէլէտէն տօլայը Բուսիանըն Ֆը. րանսայա թէվաալ իթմէսինի թէքրար Ջինօվիէֆէրէնա իթ. մէքտէ օլտըրընտան, Բարիլ Բուս էլիսի պու պապտէ Մ. Տէլգասէ. յէ՛ միւլքին իսէ մաթլուպաթընըն պիր ալ թէնլիլ օլընմաղընը թէք լիֆ էլիմիլ տիր:

—Պապը Ալիին Պանը Օթօն. մա վէ Տէօյլէ պանթա միւրաճաթլէ, Լօրէնտայա էօտէնիլէքէք մէպ. լալ իչիւն իսթիֆալ իթմէյէ չա. լըշտըլը Սթանպօլտան պիտիբրի. միլ տիր:

—Բարիլտէ թահսիլի ուլում իտէն թիւրք թալէպէլէրին Սուլ. թանա պաթլէլէրաֆ միւրաճաթլ. լէ, քէնտիլլէրին վէրիլմէսի լաղըմ կէլէն, ֆագաթ թէլէթիլ օլընմըլ օլան խարճըլարըն տէրհալ էօ. տէնիլմէսինի թալէպ իթմիլէր. աքսի հալինտէ մուսալիֆ հարէ. քէթտէ պուլընտալարընը թէհ. տիտէն պիտիբրիլէր Սթանպօլ. տան «Աթան Բուլմէն»է հազըլմըլ տըր:

—Խարիճիլէ նազըրը թէվիլգ բաշա սօն տէֆա րուս էլիսինի թէվաալ թէնա միւրաճաթլ իթ. մէսինտէ Մ. Ջինօվիէֆ ճէվապէն. Ֆրանսանըն թալէպիլի թէվապէն գապուլ իթմէքտէն մաստէ չարէ օլմաղընըն սէօյլէմիլ տիր:

ԿիրիՏ

Տանիմարգատա գըրալարըն թէ. ճէմիլմէսինտէ կիրիտի Երմէնիստ. թան իլէ պիրլէշտիմէք մէսէլէ. սինտէն տօլայը ուլուլ մուպաճասէ լէր օլմուշ օլուպ, Չար վէ Գրալ Խուսարտ կիրիտին պիրլէշտիլ. մէսինի միւսաիպ կէօրմիլլէր. իթլալ վէ Ֆրանսա տալի պու ֆիքրէ մուսալիֆ պուլընմաղը. ար. ֆագաթ Ալմանիա վէ Աստ. րիւ գարըն էֆքեար պէլան իթ. միլլէր իսէտէ, պու իթ տէվլէ. թին կիրիտտէ պէօրիւք մէնֆա. ալթարը պուլուսաղընտան, տիկէրլէրին գարարընա մուլալէ. ֆէթ իչիւն ուճ տէրէքէ իտտաա իթմիլէքէլէրին վիլէննանըն «Էն ֆօրմագիա» կազէթալը հազըլմըլ տըր:

ՄՈՒՀԻՄ ԻԼԻՆ

Շիմիլիլէ գատար կազէթա պետէլի. նի էօտէմէմիլ օլան տպէլէրիմիլգէ իթիլէր սաթըլլէ իշպու սէնիլին զիլ սեմիլ խիթալընա գատար պօրճալ. րընըն արգատարընը պիտիբրուպ, տէր. հալ կէօնտէրմէլէրին իլէնա իթմիլ. Պու իլիթարա տալի էլէմիլլէթ վէր. մէլէլէլէր զայրը կազէթա կէօնտէր. մէլէլէլիմիլ կիպի, պու Եօլլէ միլլի պիր կազէթանըն հազըրըն իպթալ իթ. մէք իսթէյէլէրին խիթալլէրին ճէրի. տէլէ տէրճ իթմէլէ մէպուր օլմա. զըլըք գաթիլ իսթար իտէրիլ:

Одговорникъ Н. Драгулевъ.
Печатница «Взаимность», Варна